ՓՈԽԱԴԱՐԶ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է փոխադարձ համաձայնութիւնը:
Փոխադարձ համաձայնութիւն կը նշանակէ, որ դուք եւ շրջանային կեդրոնը ձեր ծառայութիւններուն շուրջը կը համաձայնիք: Դուք պէտք է գրաւոր համաձայնութիւն ներկայացնէք եթէ համաձայնիք շրջանային կեդրոնի որոշումին հետ՝

- Նուազեցնելու, փոխելու կամ դադրեցնելու ծառայութիւն մը ձեր Անհատական նախագիծի ծրագիրին մէջ (IPP):
- Մերժելու նոր ծառայութիւն մը, որ կը կ'ուզէք ստանալ:

Ի՞նչ ընել երբ դուք եւ Շրջանային կեդրոնը չէք համաձայնիր
Երբ դուք եւ ձեր շրջանային կեդրոնը չհամաձայնիք, շրջանային կեդրոնը պէտք է ձեզիգործողութեան մասին ազդ (NOA) ղրկէ: NOA-ը ձեզի կը տեղեկացնէ շրջանային կեդրոնի որոշումին մասին: Այն նաեւ կը տեղեկացնէ բողոքի դիմելու ձեր իրաւունքին մասին:

Ինչպէ՞ս կրնայ ձեր Շրջանային կեդրոնը ցոյց տալ, որ գրաւոր փոխադարձ համաձայնութիւն կայ:
Փոխադարձ համաձայնութիւնը տեղի կ'ունենայ երբ՝

- Ստորագրած էք Անհատական նախագիծի ծրագիր մը (IPP)՝ անոր մէջ առաջարկուող փոփոխութեամբ կամ մերժումով: IPP-ն ձեր նախընտրած լեզուով պէտք է ըլլայ:
- Դուք ստորագրած էք ծառայութիւններու ցանկ մը՝ անոր մէջ առաջարկուող փոփոխութեամբ կամ մերժումով: Ծառայութիւններու ցանկը ձեր նախընտրած լեզուով պէտք է ըլլայ:
- Դուք շրջանային կեդրոնին ղրկած էք գրաւոր փաստաթուղթ մը, որուն մէջ յայտնած էք ծրագիրի մը փոփոխութեան կամ մերժումին վերաբերեալ որոշումին ձեր համաձայնութիւնը: Գրաւոր փաստաթուղթը կրնայ ըլլալ ե-նամակ մը, կամ նամակ մը, կամ որեւէ այլ փաստաթուղթ:

Ի՞նչ քայլերու դիմել երբ չկայ համաձայնութիւնը ցոյց տուող գրաւոր փաստաթուղթ մը
Երբ չկայ գրաւոր փոխադարձ համաձայնութեան փաստաթուղթ մը, շրջանային կեդրոնը կրնայ՝

- Ձեզի ղրկել նամակ մը՝ բացատրելու, թէ ինչու շրջանային կեդրոնը կը կարծէ, որ դուք համաձայնած էք որոշումին հետ: Այս մէկը կը կոչուի Բարեխիղճ հաւատքի նամակ (Good Faith Belief letter):
- Ձեզի ղրկէ Գործողութեան մասին ազդ (NOA):

Բարեխիղճ հաւատքի նամակին մէջ ներառուելիք տեղեկութիւններ

Բարեխիղճ հաւատքի նամակը (Good Faith Belief letter) պէտք է ղրկուի 5 աշխատանքային օրուան ընթացքին, այն օրէն սկսեալ երբ շրջանային կեդրոնը կը կարծէ, որ դուք համաձայն էք որոշումին հետ:

Բարեխճիղճ հաւատքի նամակը պէտք է ընդգրկէ.

- Փաստերը, որոնք ցոյց կու տան, թէ ինչու շրջանային կեդրոնը կը կարծէ, որ դուք համաձայն էք:
- Այն գործողութիւնը, որ Շրջանային կեդրոնը կը ծրագրէ կատարել:

- Որոշումը առնելու պատճառները:
- Բողոքի դիմումի գործընթացին վերաբերեալ տեղեկութիւններ:
- Տեղեկութիւններ, թէ ինչպէս կրնաք ըսել, որ համաձայն չէք
- Ինչպէ՞ս տեղեկութիւններ ստանալ դիմումի բողոքի գործընթացին մասին, եւ
- Բողոքի դիմումի ձեւաթուղթ:

Այս նամակը ձեր նախընտրած լեզուով պէտք է ըլլայ:

Եթէ դուք շրջանային կեդրոնին ձեր անհամաձայնութեան մասին յայտնէք, շրջանային կեդրոնը պէտք է ձեզի NOA-ը ղրկէ:

Օգնութիւն տրամադրելի է.

- Ձեր ծառայութիւններու համակարգողը կամ շրջանային կեդրոնի այլ աշխատակից մը կրնայ ձեզի օգտակար դառնալ: Կրնան բացատրել բարեխիղճ հաւատքի նամակը կամ NOA-ը: Կրնան նաեւ յանձնարարել այլ մարդոց կամ գործակալութիւններու, որոնք կրնան ձեզի օգտակար դառնալ:
- Զարգացման ծառայութիւններու բաժանմունքի Մարդկային իրաւունքներու պաշտպանի գրասենեակը կրնայ օգտակար դառնալ բացատրելու բարեխիղճ հաւատքի նամակը կամ NOA-ը: Կրնան նաեւ ներկայացնել ձեր ընտրանքները եթէ դուք համաձայն չէք: Մարդկային իրաւունքներու պաշտպանը ձեզի կը տրամադրէ ձեր բողոքի դիմումի իրաւունքներուն մասին տեղեկութիւններ: Կրնաք կապ հաստատել Մարդկային իրաւունքներու պաշտպանի գրասենեակին հետ՝ (877) 658-9731 հեռաձայնի թիւով կամ ombudsperson@dds.ca.gov է-նամակի հասցէով:
- Ձեր յաճախորդներու իրաւունքներու պաշտպանին հետ (CRA)՝ հեռաձայնելով (800) 390-7032 թիւին՝ Հիւսիսային Քալիֆորնիայի համար,
(866) 833-6712 թիւին՝ Հարաւային Քալիֆորնիայի համար: Ձեր յաճախորդներու իրաւունքներու պաշտպանը կրնայ ձեզի օգտակար դառնալ հաստատումի նամակը կամ NOA-ը հասկնալու: Ձեզի կրնան ձեր ընտրանքներուն մասին տեղեկութիւններ տալ: Յաճախորդներու իրաւունքներու պաշտպանը կրնայ ձեզի օգնել ձեր յառաջիկայ քայլերուն մէջ: